Social Security

Ինքնության Գողություն եւ Ձեր Սոցիալական Ապահովության Համարը

www.socialsecurity.gov

Ինքնության Գողություն եւ Ձեր Սոցիալական Ապահովության Համարը

Անձնական տվյալների գողությունն Ամերիկայում ամենաարագ աճող հանցագործություններից մեկն է: Երբ Ձեր սոցիալական ապահովության համարն ընկնում է անազնիվ մարդու ձեռքը, նա կարող է այդ համարի միջոցով իմանալ և օգտագործել Ձեր մասին այլ անձնական տեղեկություններ: Անձնական տվյալներ գողացող անձինք կարող են օգտագործել Ձեր համարն ու լավ վարկային պատմությունը՝ Ձեր անունից նոր վարկերի դիմելու համար: Հետո նրանք օգտագործում են վարկային քարտերն ու չեն վճարում հաշիվները: Դուք պարզում եք, որ Ձեր համարն այլ անձ է օգտագործում միայն այն ժամանակ, երբ հրաժարվում են Ձեզ վարկ տրամադրել կամ զանգահարում են անծանոթ վարկատուներ և պահանջում վճարել այնպիսի ապրանքների կամ ծառայությունների համար, որոնք Դուք երբեք չեք գնել:

Ձեր սոցիալական ապահովության համարն անօրինական կերպով օգտագործող ու Ձեր փաստաթղթերով ապրող անձը կարող է բազմաթիվ խնդիրներ ստեղծել Ձեզ համար:

Ձեր համարը գաղտնի է

Սոցիալական ապահովության վարչությունը պաշտպանում է Ձեր սոցիալական ապահովության համարը և գաղտնի է պահում Ձեր մասին եղած տվյալները: Մենք ոչ ոքի չենք տալիս Ձեր համարը՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Դուք պետք է

զգուշանաք տրամադրել Ձեր համարը, նույնիսկ երբ Ձեզնից պահանջում են դա: Հարցրեք, թե ինչու է այն անհրաժեշտ, ինչ նպատակով է օգտագործվելու և ինչ կլինի, եթե հրաժարվեք տրամադրել այն: Այս հարցերի պատասխանները կօգնեն կողմնորոշվել՝ արդյոք պետք է տրամադրել Ձեր սոցիալական ապահովության համարը:

Ինչպե՞ս որևէ մեկը կարող է գողանալ Ձեր համարը:

Անձնական տվյալներ գողացող անձինք ստանում են Ձեր անձնական տվյալները՝

- գողանալով դրամապանակներ, պայուսակներ և նամակներ (բանկի և վարկային քարտի քաղվածքներ, վարկի առաջարկներ, նոր վճարագրեր և հարկային տեղեկատվություն),
- գողանալով անձնական տվյալներ, որոնք Դուք տրամադրում եք Համացանցի անապահով կայքերում, ինչպես նաև ձեռնարկությունների կադրերի բաժնից և տանը պահվող անձնական փաստաթղթերից,
- քջջելով Ձեր աղբը, ընկերությունների աղբամաններն ու հասարակական աղբանոցները՝ անձնական տվյալներ գտնելու ակնկալիքով,
- հեռախոսով կամ էլ. փոստով ձևանալով մեկը, օրինակ՝ գործատու կամ տանտեր, ում օրինապես անհրաժեշտ են Ձեր տվյալները, կամ
- «ներքին» աղբյուրներից գնելով անձնական տեղեկություններ: Օրինակ՝ անձնական տվյալներ գողացող անձը

կարող է վճարել խանութի աշխատողին և ստանալ տեղեկություններ, որոնք Դուք տրամադրել եք՝ ապրանքների, ծառայությունների կամ վարկի համար դիմելիս:

Ձեր սոցիալական ապահովության քարտն ու համարը տրամադրելիս ցուցաբերեք զգուշություն

Աշխատանքի տեղավորվելիս՝ ցույց տվեք Ձեր քարտը գործատուին, որպեսզի Ձեր տվյալները ճշգրիտ լինեն: Ներկայացրեք Ձեր սոցիալական ապահովության համարը ֆինանսական հաստատությանը (հաստատություններին)՝ հարկային հաշվետվության նպատակներով: Ապահով վայրում պահեք Ձեր քարտը և որևէ այլ փաստաթուղթ, որում նշված է Ձեր սոցիալական ապահովության համարը: Ձեզ հետ ամեն օր ՄԻ կրեք Ձեր քարտն ու մյուս փաստաթղթերը, որոնցում նշված է Ձեր համարը:

Ինչ անել, եթե կարծում եք, որ Ձեր համարը մեկ ուրիշն է օգտագործում:

Երբեմն՝ մտադրված կամ պատահաբար, սոցիալական ապահովության նույն համարից օգտվում են մեկից ավելի անձինք: Եթե կարծում եք, որ Ձեր համարը մեկ ուրիշն է օգտագործում՝ աշխատանքի նպատակով, կապվեք մեզ հետ և հաղորդեք

խնդրի մասին: Մենք Ձեզ հետ միասին կստուգենք Ձեր հասույթը՝ համոզվելու, որ մեր տվյալները ճիշտ են:

Դուք կարող եք նաև ստուգել Ձեր տվյալներին կից եկամուտները՝ Ձեր Սոցիալական ապահովության հաշվետվությունում (*Social Security Statement*) (ձև SSA-7005, միայն անգլերեն): Հաշվետվության առցանց տարբերակից կարող են օգտվել առնվազն 18 տարեկան աշխատող անձինք: Ձեր հաշվետվությունն ստանալու համար այցելեք ***www.socialsecurity.gov/mystatement*** և ստեղծեք հաշիվ:

Ինչ անել, եթե անձնական տվյալներ գողացողը Ձեզ համար վարկերի հետ կապված խնդիրներ է ստեղծում:

Սոցիալական ապահովության վարչությունը չի կարող Ձեզ օգնել, եթե որևէ մեկն օգտագործում է Ձեր սոցիալական ապահովության համարը կամ այլ անձնական տեղեկություններ՝ ստեղծելով վարկերի հետ կապված կամ այլ տեսակի խնդիրներ: Սակայն Դուք կարող եք որոշ քայլեր ձեռնարկել:

Դուք պետք է դիմեք Առևտրի դաշնային հանձնաժողով (FTC)՝ ***www.ftc.gov/bcp/edu/microsites/idtheft*** կայքէջի միջոցով: Կարող եք նաև զանգահարել **1-877-IDTHEFT** (**1-877-438-4338**); հեռատիպ՝ **1-866-653-4261**: FTC-ի կայքը անձնական տվյալների գողության

www.socialsecurity.gov

մասին տեղեկություններ պարունակող համապարփակ պետական աղբյուր է: Այն տրամադրում է մանրամասն տեղեկատվություն՝ անձնական տվյալների գողությունը կանխելու, ճանաչելու և դրանից պաշտպանվելու միջոցների մասին:

Ցանկալի է նաև դիմել Ներքին եկամուտների ծառայություն: Անձնական տվյալներ գողացողը կարող է նաև Ձեր սոցիալական ապահովության համարով հարկային հայտարարագիր ներկայացնել՝ հատուցում ստանալու նպատակով: Եթե գողը Ձեզնից շուտ ներկայացնի հայտարարագիրը, ապա IRS-ը կգրանցի, որ Դուք արդեն ներկայացրել եք Ձեր հայտարարագիրը և համապատասխան հատուցում ստացել: Ձեր սոցիալական ապահովության համարի գողության դեպքում՝ մեկ ուրիշը կարող է դրա միջոցով աշխատանքի տեղավորվել: Այդ անձի գործատուն կզեկուցի նրա վաստակած գումարը IRS-ին՝ օգտագործելով Ձեր սոցիալական ապահովության համարը: Արդյունքում կստեղծվի տպավորություն, իբր Դուք Ձեր հարկային հայտարարագրում չեք նշել Ձեր ողջ եկամուտը: Եթե կարծում եք, որ անձնական տվյալների գողության հետևանքով հարկերի հետ կապված խնդիրներ ունեք, դիմեք IRS-ի Ինքնության պաշտպանության բաժին՝ ***www.irs.gov/privacy/article/0,,id=186436,00.html*** կամ զանգահարեք **1-800-908-4490**:

Դուք պետք է նաև առցանց բողոք ներկայացնեք՝ Համացանցային հանցագործությունների բողոքների կենտրոն (IC3)՝***www.ic3.gov*** կայքի միջոցով:

(շրջել)

IC3-ն համացանցային հանցագործությունների զոհերին տրամադրում է բողոք ներկայացնելու հարմար և հեշտ օգտագործվող գործիք, որն զգուշացնում է իշխանություններին՝ կասկածելի քրեական կամ քաղաքացիական խախտումների մասին: IC3-ն բոլոր բողոքներն ուղարկում է մեկ կամ մի քանի իրավապահ կամ ղեկավար մարմինների, որոնք իրավասու են՝ քննելու տվյալ գործը:

IC3-ի գործն է՝ ստանալ, մշակել և համապատասխան մարմնին հանձնել բողոքները՝ կապված համացանցային հանցագործությունների արագ ընդլայնվող ոլորտի հետ: Դաշնային, նահանգային, տեղական և միջազգային մակարդակներով գործող իրավապահ և ղեկավար մարմինների համար IC3-ն տրամադրում է գործերի փոխանցման կենտրոնական մեխանիզմ՝ Համացանցին առնչվող հանցագործություններին վերաբերող բողոքների համար:

IC3-ն համագործակցություն է՝ Հետաքննությունների դաշնային բյուրոյի, Մտավոր ոլորտի հանցագործությունների դեմ պայքարի ազգային կենտրոնի և Արդարադատության աջակցության բյուրոյի միջև:

Դուք պետք է նաև պարբերաբար հետևեք Ձեր վարկային հաշվետվություններին: Անվճար վարկային հաշվետվություններ կարող եք գտնել առցանց՝ ***www.annualcreditreport.com*** կայքում:

Արդյո՞ք պետք է սոցիալական ապահովության նոր համար ստանալ:

Եթե Դուք ձեռնարկել եք բոլոր հնարավոր քայլերը՝ Ձեր սոցիալական ապահովության համարի չարաշահման հետևանքով

առաջացած խնդիրները լուծելու համար, բայց ինչ-որ մեկը դեռևս օգտագործում է Ձեր համարը, ապա մենք կարող ենք նոր համար տալ Ձեզ:

Դուք չեք կարող սոցիալական ապահովության նոր համար ստանալ՝

- սնանկացման համար դիմելու հետևանքներից խուսափելու,
- օրենքից կամ օրենքի առջև պատասխանատվությունից խուսափելու համար կամ
- եթե Ձեր սոցիալական ապահովության քարտը կորել է կամ գողացվել, բայց ապացույցներ չկան, որ ինչ-որ մեկն օգտվում է դրանից:

Եթե որոշեք դիմել՝ նոր համար ստանալու, պետք է ներկայացնեք Ձեր տարիքը, ԱՄՆ քաղաքացիությունը կամ օրինական ներգաղթի կարգավիճակն ու անձը հաստատող փաստաթղթեր: Լրացուցիչ տեղեկությունների համար պահանջեք «*Ձեր Սոցիալական Ապահովության Համարն Ու Քարտը*» (Publication Number 05-10002-AM) հրապարակումը: Անհրաժեշտ կլինի նաև ապացուցել, որ Դուք սոցիալական ապահովության համարի չարաշահման հետևանքով դեռևս խնդիրներ ունեք:

Նկատի ունեցեք, որ նոր համարը հավանաբար չի լուծի Ձեր բոլոր խնդիրները, քանի որ այլ պետական մարմիններ (օրինակ՝ Ներքին եկամուտների ծառայությունը և տրանսպորտային միջոցների գրանցման գերատեսչությունները) և մասնավոր ընկերություններ (օրինակ՝ բանկերը և վարկային գործակալությունները), ամենայն հավանականությամբ, Ձեր տվյալները կպահեն հին համարին կից: Բացի այդ, վարկային գործակալությունները՝ Ձեր վարկային պատմությունը

նույնականացնելու համար անձնական մյուս տվյալների հետ մեկտեղ օգտագործում են սոցիալական ապահովության համարը, ուստի նոր համար օգտագործելը նոր սկիզբ չի երաշխավորում: Դա հատկապես վերաբերում է այն դեպքերին, երբ Ձեր մյուս անձնական տվյալները, օրինակ՝ անունն ու հասցեն, նույնն են մնում:

Սոցիալական ապահովության նոր քարտ ստանալու դեպքում Դուք այլևս չեք կարողանա օգտագործել հինը:

Անձնական տվյալների գողության որոշ զոհերի համար՝ նոր համարը նոր խնդիրներ է ստեղծում: Եթե հին վարկերի մասին տեղեկությունները համակցված չլինեն նոր համարի հետ, ապա նոր համարի ներքո վարկային պատմության բացակայությունը կարող է բացասաբար ազդել վարկ ստանալու հնարավորության վրա:

Ինչպես կապ հաստատել Սոցիալական ապահովության վարչության հետ

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու և մեր հրապարակումների կրկնօրինակները գտնելու համար այցելեք մեր կայքը՝ ***www.socialsecurity.gov*** կամ զանգահարեք անվճար հեռախոսահամարով **1-800-772-1213** (խուլ կամ թույլ լսողությամբ անձինք կարող են զանգահարել հեռատիպի համարով՝ **1-800-325-0778**): Մենք պահպանում ենք բոլոր հեռախոսազանգերի գաղտնիությունը: Եթե իսպանախոս եք, ապա սեղմեք 2: Մյուս բոլոր լեզուների համար սեղմեք 1, սպասեք գծի վրա և լուռ մնացեք անգլերեն ինքնաշխատ հուշումների ժամանակ, մինչև ներկայացուցիչը կպատասխանի: Ներկայացուցիչը կկապվի թարգմանչի հետ, ով կօգնի պատասխանել Ձեր զանգին: Թարգմանչի ծառայություններն անվճար են: Մենք կարող

ենք պատասխանել Ձեզ հետաքրքրող հարցերին առավոտյան ժամը 7-ից մինչև երեկոյան ժամը 7-ը, երկուշաբթի-ուրբաթ օրերին: Անգլերեն տեղեկություններ կարող ենք տրամադրել ինքնաշխատ հեռախոսային ծառայության միջոցով՝ օրական 24 ժամ:

Ուզում ենք նաեւ վստահ լինել թէ դուք ստանում եք ճշգրիտ տեղեկություն ու հարգալից ծառայություն: Այդ պատճառով, Սոցիալական Ապահովության երկրորդ ներկայացուցիչ մը հսկում է որոշ հեռախոսազանգեր:

Social Security Administration
SSA Publication No.05-10064-AM
Identity Theft And Your Social Security Number (Armenian)
July 2012